# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2024 թվականի N 928 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1475-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 3-ի «Հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջարկման կարգը սահմանելու մասին» N 1475-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում «օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ պարբերության» բառերը փոխարինել «օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ պարբերության» բառերով.

2) որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի (այսուհետ՝ հավելված) 1-ին կետում «օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ պարբերությամբ» բառերը փոխարինել «օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ պարբերությամբ» բառերով.

3) հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն կարգի համաձայն հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով կոմիտեի նախագահի առաջին տեղակալը, կոմիտեի նախագահի տեղակալները և կոմիտեի գլխավոր քարտուղարը կոմիտեի նախագահին են ներկայացնում սույն կարգի 6-րդ կետով նախատեսված չափանիշները բավարարող առավելագույնը երեքական թեկնածու, իսկ կոմիտեի նախագահի անմիջական ենթակայության տակ գտնվող կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ մեկական թեկնածու։».

4) հավելվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Կոմիտեի նախագահի առաջին տեղակալը, կոմիտեի նախագահի տեղակալները, կոմիտեի գլխավոր քարտուղարը և կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները կարող են ներկայացնել նաև իրենց թեկնածությունները։»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ